

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացված տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ստացել է 5073 գրավոր հարցում (հաշվառված են նախարարության ստորաբաժանումներ, գործակալություններ և զբոսաշրջության կոմիտե ուղարկված գրավոր հարցումները/այդ թվում՝ կառավարությունից վերահասցեագրված, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության ֆեյսբուքյան էջով ստացված հարցումները):

Հարցումներից շուրջ 150-ը եղել են լրագրող/լրատվամիջոցներից, մնացածը՝ ՀԿ-ների, քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում գործել են 4 ուղղությամբ ԹԵԺ ԳԾԵՐ, որոնցով ստացվել է մոտ 58 600 զանգ:

- **Ներդրումների աջակցման կենտրոն**

Ներդրումների աջակցման կենտրոնի թեժ գծով ապրիլի 1-ից հունիսի 30-ը ստացվել է 40 հազարից ավել հեռախոսազանգ:

- **Գործարար և ներդրումային միջավայր**

Գործարար և ներդրումային միջավայրի վերաբերյալ հարցերով թեժ գծով մարտի 15-ից հունիսի 30-ը ստացել է մոտավոր հաշվարկներով շուրջ 9000 զանգ:

- **Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության ոլորտի թեժ գծով ապրիլ-հունիս ամիսներին ստացվել է մոտ 8100 հեռախոսազանգ:

- **Զբոսաշրջություն**

Զբոսաշրջության կոմիտեի թեժ գծին մարտ-հունիս ամիսների ընթացքում միջոցառումների և մի շարք այլ հարցերի վերաբերյալ ստացվել է շուրջ 1500 զանգ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչությունների կողմից ստացված բանավոր հարցումների ընդհանուր ամփոփում չի իրականացվել, սակայն աշխատակիցների կողմից բազմաթիվ բանավոր հարցումների տրվել են պատասխաններ: